ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/297

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
Մասնակից՝ «Վահե Ղազարյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16797-2021 գրությամբ «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.10.2021թ.-ի գրության հիման վրա, 14.10.2021թ.-ին «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 14.10.2021թ.-ին:

15.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/297 համարի ծածկագիրը:

26.10.2021թ.-ին և 12.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.11.2021թ.-ին:

2. <u>Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 07.10.2021թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար <e-auction.armeps.am> էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարվել է «ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների ձեռքբերման մրցույթի հրավեր:

Մրցույթին մասնակցել են «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ն և ԱՍԴԳ ՍՊԸ-ն: Հետադարձ աճուրդի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ն: Վերջինիս անգործության ժամկետը ավարտվելուց հետո սույն թվականի սեպտեմբերի 13-ի համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու մասին առաջարկ, սակայն մասնակիցը սահմանված ժամկետը լրանալուց հետո այն է սույն թվականի սեպտեմբերի 27-ը ներառյալ չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, այլ սույն թվականի սեպտեմբերի 28-ին համակարգ է բեռնել ֆայլ, որը բացելիս տալիս է error հրահանգը:

Ինչպես նաև սույն թվականի սեպտեմբերի 28-ին տեղեկացրել է գրությամբ գնահատող հանձնաժողովին, որ հրաժարվում է կնքել պայմանագիր:

Խնդրում ենք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ հիմք ընդունելով վերոգրյալը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 36-րդ հոդվածի դրույթները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վահե Ղազարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.10.2021թ.-ին գրությամբ դիմել է «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16797-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 19.10.2021թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ստացա ծանուցումը և այո, անպայման կմասնակցեմ նիստին: Շնորհակալ եմ ծանուցելու համար: Հեռուստատեսության և ֆիլմարտադրության բնագավառում ստեղծագործելով ավելի քան 15 (տասնհինգ) տարի, ունենալով բազում միջազգային մրցանակներ և որակյալ արտադրանք ստեղծողի համբավ, երբեք չեմ հայտնվել նման անելանելի իրավիճակում, ինչպիսին սա էր: Երբեք չեմ եղել ոչ մի «սև ցուցակ»-ում, ինչպես իրավաբանական, այնպես էլ որպես ստեղծագործական անձ և անհատ, այդ իսկ պատճառով խիստ ցավալի է ինձ համար նման ցուցակում հայտնվելը (որը ես հստակ համարում եմ ոչ իմ մեղքով) և ուրախ եմ, որ հնարավորություն կստանամ մասնակցելու բողոքարկման նիստին և ավելի մանրամասն ներկայացնելու այն իրավիճակը, որում ես հայտնվեցի: Եվս մեկ անգամ կներկայացնեմ խնդրի համառոտ բնութագրությունը, որը ես

ուղարկել էի «Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ»-ի տնօրենին:

«Ելնելով ապագա հաղորդաշարի տեխնիկական բնութագրում հաղորդավարի մանրամասն նկարագրությունից իմ ընտրությունը կանգեց միայն և միայն Հրանտ Թոխատյանի թեկնածության վրա: Ուսումնասիրելով «Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ»-ի ստրատեգիական պլանը այն է հնարավորինս ակտիվացնել տեղական գինեգործների արտադրանքի վաճառքն արտերկրում (մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում), ես մեկ անգամ գիտակցեցինք, որ հաղորդավարի ընտրությունը խիստ կարևոր է և այն կարող է լինել միայն և միայն Հրանտ Թոխատյանը հաշվի առնելով նրա անհերքելի ճանաչումն ու սերն արտերկրում (մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում):

Ես ձեռք բերեցի համաձայնություն Հրանտ Թոխատյանի հետ, որից հետո գրվեցին թվով ութ հաղորդման սցենարներ, որոնք բացառապես համապատասխանեցված էին Հրանտ Թոխատյանի դերասանական հայտնի ամպլուային:

Ցավոք, Հրանտ Թոխատյանի առողջական վիճակը բարդացավ և բժիշկները նշանակեցին նրան ոտքի ջլի բարդ վիրահատություն և հստակ չասացին, թե որքան կտևի վերականգնողական շրջանը: Սակայն ասացին, որ գրեթե ողջ հոկտեմբեր ամիսը նա պետք է անց կացնի ոտքը գիպսի մեջ, սկզբից հիվանդանոցային, ապա տնային պայմաններում: Եվ քանի որ հեռուսանախագծի եթերը նախատեսված էր սույն թվականի նոյեմբերի 15-ից, ապա բոլոր ստեղծագործական և տեխնիկական հաշվարկներով հանգում եմ այն եզրակացության, որ հնարավոր չէ այն իրականացնել տվյալ ժամկետներում:»:

Ի լրումն վերոնշյալ գրության, Մասնակիցը 11.11.2021թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նիստի ժամանակ անձը հաստատող փաստաթուղթը մոտս չլինելու պատճառով չեմ կարողացել մուտք գործել շենք և մասնակցել նիստին:

Լսված լինելու իրավունքս իրացնելով, խնդրում եմ սույն բացատրություններն ընդունել:

Մրցույթի տեխնիկական բնութագիրն այնպիսին էր, որ դրանում նշված հաղորդավարը կարող էր լինել միայն Հրանտ Թոխատյանը:

Այսպես, ըստ տեխնիկական բնութագրի «Հաղորդաշարի հաղորդավարը պետք է ունենա լայն ճանաչում Հայաստանում և Ռուսաստանի Դաշնությունում: Մասնավորապես, հաղորդավարը պետք է նկարահանված լինի Հայաստանում նվազագույնը մեկ ֆիլմում որպես գլխավոր հերոս և նվազագունը մեկ հաղորդման մեջ որպես հաղորդավար, և

նվազագույնը մեկ ֆիլմաշարում որպես գլխավոր կերպար: Հաղորդավարի նկարահանված նվազագույնը մեկ ֆիլմ, մեկ ֆիլմաշար և մեկ հաղորդաշար պետք է հեռարձակված լինեն Հայաստանում համապետական սփռման ցանց ունեցող հեռուստաընկերությունների կողմից: Հաղորդավարը պետք է նկարահանված լինի Ռուսաստանի Դաշնությունում արտադրված նվազագույնը մեկ ֆիլմում կամ հաղորդման մեջ, և ֆիլմը/հաղորդումը պետք է հեռարձակված լինի դաշնային հեռուստաալիքներից մեկով: ՌԴ-ում նկարահանված ֆիլմում/հաղորդման մեջ հաղորդավարի հիմնական խոսքը պետք է լինի ռուսերեն լեզվով: Հաղորդավարը պետք է լինի մասնագիտությամբ դերասան, արական սեռի, 60-ից բարձր տարիքի: Հաղորդավարը պետք է ունենա սոցիալական ցանցերում նվազագույնը 30 հազար հետևորդ, իսկ գլխավոր դերում նկարահանված ֆիլմ/հաղորդաշար/ֆիլմաշարից որևէ մեկն ունենա նվազագույնը մեկ միլիոն յութուբյան դիտում: Հաղորդավարի ընտրությունը պետք է հաստատվի Պատվիրատուի կողմից:»:

Ինչպես տեսնում եք նույնիսկ սեռն են նշել, տարիքը և մնացած մյուս պայմանները, սահմանափակելով իմ ընտրությունը:

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացուցիչն ինձ տեղեկացրել է, որ այս չափանիշներին համընկնում է Հրանտ Թոխատյանը: Ստիպված բանակցություն եմ վարել Հ. Թոխատյանի պրոդյուսերի հետ: Սկզբնական շրջանում պարոն Թոխատյանը տվել էր իր համաձայնությունը, սակայն ոտքի հետ կապված խնդրի պատճառով հրաժարվել էր ինձ հետ համագործակցել:

Հետագայում Հրանտ Թոխատյանը նաև բուժում է ստացել ոտքի հետ կապված: Նրան ցուցվել է 3 շաբաթ անշարժացում: Որպես իր առողջության հետ կապված ապացույց պարոն Թոխատյանի պրոդյուսերը ինձ է ներկայացրել 04.10.2021թ. էպիկրիզի պատճենը, որը ներկայացնում եմ Ձեզ:

Այս պայմաններում, մտել եմ փակուղի և ստիպված չեմ կնքել համապատասխան պայմանագիրը, քանի որ որևէ կերպ հնարավորություն չէի ունենալու կատարել տեխնիկական բնութագրով ամբողջությամբ Հրանտ Թոխատյանին բնորոշող հաղորդավար ընտրելու իմ պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա խնդրում եմ իմ վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնել վերոհիշյալ հարգելի պատճառները և «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված ցուցակում ինձ չընդգրկել:»:

4. <u>ՍՑ-LO-2021/297 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով 19.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 26.08.2021թ.-ին ժամը 15:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) հավելված 6-ով՝ պետության կարիքների համար հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է հետևյալը. «Կատարողը պետք է մշակի սցենարը, նկարահանի և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին տրամադրի Հանրային հեռուստաընկերության եթերին պատրաստ գինու սպառման խթանման թեմայով հաղորդաշար՝ մինչև 2021 թվականի նոյեմբերի 1-ը: Կատարողը պետք է ունենա վավերագրական ֆիլմերի, ֆիլմաշարերի և հաղորդաշարերի նկարահանման յուրաքանչյուրից նվազագույնը 3 տարվա փորձ: Կատարողը պետք է հեռարձակած լինի հանրային հեռուստաընկերության եթերում նվազագույնը մեկ ֆիլմ, մեկ ֆիլմաշար, մեկ հաղորդաշար, և ունենա նվազագույնը մեկ ֆիլմ կամ ֆիլմաշար ռուսերեն և անգլերեն լեզուներով ձայնային թարգմանությամբ: Կատարողը պետք է ունենա նվազագույնը մեկ ֆիլմ կամ հաղորդաշար կամ ֆիլմաշար հանրային հեռուստաընկերության կայքում առկա՝ հանրային դիտման համար: Կատարողը պետք է ունենա բազմասերիանոց վավերագրական ֆիլմերի և հաղորդումների սցենարական մշակման փորձ: Կատարողը պետք է ունենա Հանրային հեռուստաընկերության միջոցով հաղորդաշարը հեռարձակելու գրավոր պայմանավորվածություն: Բոլոր փաստաթղթերը, որոնք հավաստում են վերոնշյալը, պետք է ներկայացվեն պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Կատարողը պետք է նկարահանի նվազագույնը 8 հաղորդումից բաղկացած հաղորդաշար, որը պետք է ներառի, բայց չսահմանափակվի հետևյալ թեմաներով. - գինու պատմություն, - գինու հայկական աշխարհագրություն, - գինու էթիկա և էստետիկա, - գինի և առողջություն, - գինու զբոսաշրջություն, - գինին արվեստում և արհեստում, - գինու

գաղտնինքեր, - գինին առօրյայում: Հաղորդաշարը պետք է ունենա ճամփորդության և թեմայի էքսպերտային մեկնաբանության բաժիններ: Յուրաքանչյուր հաղորդման ընթացքում պետք է լինի ժամանցային համապատասխան բաղադրիչ, երբ թեման լուսաբանվում է խնջույքի պայմաններում, որին մասնակցում են թեմատիկ փորձագետերն ու հաղորդավարը: Հաղորդաշարի ընթացքում պետք է կատարվի այց և խնջույք կազմակերպվի նվազագույնը 8 մարզում և ներկայացվի նվազագույնը 8 գինեգործական, գինու զբոսաշրջության և թեմատիկ այլ ուղղություն: Բոլոր հաղորդումների սցենարները կատարողը պետք է ներկայացնի պատվիրատուին հաստատման, նկարահանումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Սցենարը հաստատելուց/մեկնաբանությունները հասցեագրելուց հետո նկարահանված բովանդակությունը պետք է ներկայացնել Պատվիրատուին հաստատման մինչև մոնտաժային աշխատանքները սկսելը՝ առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Հաղորդաշարի սցենարը պետք է միտված լինի խթանելու գինու սպառման մշակույթը Հայաստանում, մասնավորապես՝ նպատակ ունենալով ներկայացնել գինու վերածնվող ոլորտը, սպառման միտումները, կրթել հանրությանը պատասխանատու սպառման վերաբերյալ: Հաղորդաշարի հաղորդավարը պետք է ունենա լայն ճանաչում Հայաստանում և Ռուսաստանի Դաշնությունում: Մասնավորապես, հաղորդավարը պետք է նկարահանված լինի Հայաստանում նվազագույնը մեկ ֆիլմում որպես գլխավոր հերոս և նվազագունը մեկ հաղորդման մեջ որպես հաղորդավար, և նվազագույնը մեկ ֆիլմաշարում որպես գլխավոր կերպար: Հաղորդավարի նկարահանված նվազագույնը մեկ ֆիլմ, մեկ ֆիլմաշար և մեկ հաղորդաշար պետք է հեռարձակված լինեն Հայաստանում համապետական սփռման ցանց ունեցող հեռուստաընկերությունների կողմից: Հաղորդավարը պետք է նկարահանված լինի Ռուսաստանի Դաշնությունում արտադրված նվազագույնը մեկ ֆիլմում կամ հաղորդման մեջ, և ֆիլմը/հաղորդումը պետք է հեռարձակված լինի դաշնային հեռուստաալիքներից մեկով: ՌԴ-ում նկարահանված ֆիլմում/հաղորդման մեջ հաղորդավարի հիմնական խոսքը պետք է լինի ռուսերեն լեզվով: Հաղորդավարը պետք է լինի մասնագիտությամբ դերասան, արական սեռի, 60-ից բարձր տարիքի: Հաղորդավարը պետք է ունենա սոցիալական ցանցերում նվազագույնը 30 հազար հետևորդ, իսկ գլխավոր դերում նկարահանված ֆիլմ/հաղորդաշար/ֆիլմաշարից որևէ մեկն ունենա նվազագույնը մեկ միլիոն յութուբյան դիտում: Հաղորդավարի ընտրությունը պետք է հաստատվի Պատվիրատուի կողմից:»:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել նաև «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ն:

v. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ն չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ն:

vii. 30.08.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

viii. Հայտարարության համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրած /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

ix. Պատվիրատուն պայմանագիր կնքելու նպատակով 13.09.2021թ.-ին ներկայացնելով կնքվելի պայմանագրի նախագիծը դիմել է Մասնակցին և առաջարկել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում կնքել «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը:

x. Մասնակիցը 28.09.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ ելնելով ապագա հաղորդաշարի տեխնիկական բնութագրում հաղորդավարի մանրամասն նկարագրությունից, վերջինիս ընտրությունը կանգ է առել միայն Հրանտ Թոխատյանի թեկնածության վրա: Սակայն Հրանտ Թոխատյանի առողջական վիճակի բարդացման պատճառով բժիշկները կողմից նշանակվել է ոտքի վիրահատություն, իսկ վերականգնողական շրջանի տևողության մասին որևէ տեղեկատվություն չի ներկայացվել: Քանի որ հեռուսանախագծի եթերը նախատեսված էր սկսել սույն թվականի նոյեմբերի 15-ից, ուստի բոլոր ստեղծագործական և տեխնիկական հաշվարկներով այն հնարավոր չէր իրականացնել տվյալ ժամկետներում, ինչից ելնելով Մասնակիցը չի ստորագրել առաջարկվող պայմանագիրը:

xi. Հանձնաժողովի 29.09.2021թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ն սահմանված տաս աշխատանքային օրը լրանալուց հետո, այն է՝ 27.09.2021թ.-ը չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը:

xii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթները, որոշել է «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

xiii. Մասնակցի կողմից ներկայացվել է Հրանտ Թոխատյանին 04.10.2021թ.-ին տրված էպիկրիզը, որի համաձայն վերջինս 04.10.2021թ.-ին ընդունվել է «Ուիգմոր Քլինիք» ՓԲԸ-ի օրթոպեդիայի ծառայության ստացիոնար բուժման «ձախ աքիլեսյան ջլի հնացած մասնակի պատռվածք» ախտորոշմամբ և նույն օրը կատարվել է վիրահատական միջամտություն, ինչի արդյունքում ցուցվել է անշարժացում 3 շաբաթ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16797-2021 գրությամբ «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով,

գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով 19.08.2021թ.-ին հայտարարված «ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը. «… Հաղորդաշարի հաղորդավարը պետք է ունենա լայն ճանաչում Հայաստանում և Ռուսաստանի Դաշնությունում: Մասնավորապես, հաղորդավարը պետք է նկարահանված լինի Հայաստանում նվազագույնը մեկ ֆիլմում որպես գլխավոր հերոս և նվազագունը մեկ հաղորդման մեջ որպես հաղորդավար, և նվազագույնը մեկ ֆիլմաշարում որպես գլխավոր կերպար: Հաղորդավարի նկարահանված նվազագույնը մեկ ֆիլմ, մեկ ֆիլմաշար և մեկ հաղորդաշար պետք է հեռարձակված լինեն Հայաստանում համապետական սփռման ցանց ունեցող հեռուստաընկերությունների կողմից: Հաղորդավարը պետք է նկարահանված լինի Ռուսաստանի Դաշնությունում արտադրված նվազագույնը մեկ ֆիլմում կամ հաղորդման մեջ, և ֆիլմը/հաղորդումը պետք է հեռարձակված լինի դաշնային հեռուստաալիքներից մեկով: ՌԴ-ում նկարահանված ֆիլմում/հաղորդման մեջ հաղորդավարի հիմնական խոսքը պետք է լինի ռուսերեն լեզվով: Հաղորդավարը պետք է լինի մասնագիտությամբ դերասան, արական սեռի, 60-ից բարձր տարիքի: Հաղորդավարը պետք է ունենա սոցիալական ցանցերում նվազագույնը 30 հազար հետևորդ, իսկ գլխավոր դերում նկարահանված ֆիլմ/հաղորդաշար/ֆիլմաշարից որևէ մեկն ունենա նվազագույնը մեկ միլիոն յութուբյան դիտում: Հաղորդավարի ընտրությունը պետք է հաստատվի Պատվիրատուի կողմից:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ 1-ն չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ն, ինչով պայմանավորված 30.08.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն սահմանվել է անգործության ժամկետ՝

10 օրացուցային օր: Այնուհետև Պատվիրատուն, պայմանագիր կնքելու նպատակով 13.09.2021թ.-ին ներկայացնելով կնքվելի պայմանագրի նախագիծը՝ դիմել է Մասնակցին և առաջարկել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում կնքել «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը: Սակայն Մասնակիցը 28.09.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ ելնելով ապագա հաղորդաշարի տեխնիկական բնութագրում հաղորդավարի մանրամասն նկարագրությունից, վերջինիս ընտրությունը կանգ է առել միայն Հրանտ Թոխատյանի թեկնածության վրա: Սակայն Հրանտ Թոխատյանի առողջական վիճակի բարդացման պատճառով բժիշկները կողմից նշանակվել է ոտքի վիրահատություն, իսկ վերականգնողական շրջանի տևողության մասին որևէ տեղեկատվություն չի ներկայացվել: Քանի որ հեռուսանախագծի եթերը նախատեսված էր սկսել սույն թվականի նոյեմբերի 15-ից, ուստի բոլոր ստեղծագործական և տեխնիկական հաշվարկներով այն հնարավոր չէր իրականացնել տվյալ ժամկետներում, ինչից ելնելով Մասնակիցը չի ստորագրել առաջարկվող պայմանագիրը: Հանձնաժողովի 29.09.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ն սահմանված տաս աշխատանքային օրը լրանալուց հետո, այն է՝ 27.09.2021թ.-ը չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած: Մասնակցի կողմից ներկայացվել է 04.10.2021թ.-ին Հրանտ Թոխատյանին տրված էպիկրիզը, որի համաձայն վերջինս 04.10.2021թ.-ին ընդունվել է «Ուիգմոր Քլինիք» ՓԲԸ-ի օրթոպեդիայի ծառայության ստացիոնար բուժման «ձախ աքիլեսյան ջլի հնացած մասնակի պատռվածք» ախտորոշմամբ և նույն օրը կատարվել է վիրահատական միջամտություն, ինչի արդյունքում ցուցվել է անշարժացում 3 շաբաթ:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ

ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործում առկա փաստերի՝ գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի ուսումնասիրության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտմանը նպաստել է «ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված տեխնիկական բնութագրի բովանդակությունը:

Վերը նշված փաստական հանգամանքները քննարկելով Օրենքի 13-րդ հոդվածի համատեքստում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման

առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոնշյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1

հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը չի համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պայմաններին, ինչի արդյունքում խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Վերոգրյալերը համադրելով գործում առկա փաստերին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտմանը նպաստել է «ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում առկա թերությունը, այն է՝ օբյեկտիվորեն հիմնավորված չէ, որի արդյունքում սահմանված տեխնիկական բնութագիրը առաջացնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ-ի կողմից հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.09.2021թ.-ին հայտարարված «ՀԽԳՀ-ԷԱՃԾՁԲ-21/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքում Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջների խախտման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16797-2021 գրությամբ «Վահե Ղազարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/297 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**